ՀՀ քաղաքացուն Վրաստանից Հայաստան տեղափոխելու, նրան առաջին բուժօգնություն տրամադրելու, կեցությունն ապահովելու և այլ հարցերի շուրջ «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի և այլ իրավասու կառույցների համագործակցության պատկերը

Քաղաք Երևան **07.03.2019**

Իրավիճակի նախապատմություն.

2019թ.-ի հունվարի 25-ին **«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ** էր դիմել Վրաստանում բնակվող **ՀՀ քաղաքացի Գևորգ Գալստյանը**՝ խնդրանքով, աջակցելու իրեն և մորը տեղափոխվել Հայաստան՝ անվճար բուժօգնություն ստանալու նպատակով: Վերջինս ուներ ՄԻԱՎ դրական կարգավիճակ: Նրան վերադարձի վկայական տրամադրելու և անվճար Հայաստան տեղափոխելու հարցով **«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ**-ն դիմել էր **ՀՀ Արտաքին գործերի նախարարություն**: Վերջիններս բավարարել էին Կազմակերպության դիմումը, սակայն մինչ Հայաստան տեղափոխվելը Գևորգ Գալստյանը առողջական ծանր վիճակի հետևանքով 2019թ. փետրվարի 14-ին մահացել էր: Նրա **64 ամյա, երկրորդ կարգի հաշմանդամ միայնակ մայրը**, որդու մահից հետո Թբիլիսիում մնացել էր միայնակ: Նրա Վրաստանում գտնվելու թույլտվության ժամկետի ավարտը մոտենում էր: Ելնելով սոցիալական և իրավական խնդիրներից Հասմիկ Գալստյանին անհրաժեշտ էր հրատապ տեղափոխել Հայաստան:

Անհրաժեշտ գործողություններ.

1. Անհրաժեշտ էր կազմակերպել **Հասմիկ Գալստյանի տեղափոխումը Թբիլիսիից Երևան**:
2. Անհրաժեշտ էր **Հասմիկ Գալստյանի համար գտնել բնակության վայր/ խնամքի կենտրոն/ ծերանոց**:
3. Անհրաժեշտ էր **Երևան քաղաքում Հասմիկ Գալստյանին տրամադրել առաջին բժշկական օգնություն և կազմակերպել նրա տեղափոխումը Երևանից Արծվանիկ համայնք՝ Շտապ բուժօգնության մեքենայով**:

Ձեռնարկված քայլեր.

- Մինչ Հասմիկ Գալստյանին ՀՀ տեղափոխելը, անհրաժեշտ էր կարգավորել նրա կեցության հարցը: Այդ հարցի լուծման նպատակով **«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն զրուցել է ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության** համապատասխան աշխատակցի հետ և ներկայացրել հրատապ աջակցության անհրաժեշտությունը:

Նախարարությունից տեղեկացրել են, որ հրատապ օգնություն հնարավոր չէ, անհրաժեշտ է, որպեսզի կինն անձամբ մոտենա սոցիալական ծառայության համապատասխան բաժին, դիմում ներկայացնի և սպասի իր հերթին՝ որևէ ծերանոցում բնակվելու համար:

- **«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն նույն հարցով դիմել է «Առաքելություն Հայաստան» Բարեգործական ՀԿ-ին:**

«Առաքելություն Հայաստան» Բարեգործական ՀԿ-ից արագ օպերատիվ ձևով պատասխանեցին, որ չնայած իրենց ենթակայության տակ գտնվող Կենտրոնների ծանրաբեռնվածությանը, **պատրաստակամ են աջակցելու և կարգավորելու ՀՀ-ում կնոջ կեցության հարցը:**

- Հաջորդ խնդիրը Հասմիկ Գալստյանին Թբիլիսիից մինչև Սյունիքի մարզի Արծվանիկ համայնք տեղափոխումն էր: **«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն հարցը քննարկել է Արտաքին գործերի նախարարության հետ:**

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի հետ կապ է հաստատել Վրաստանում ՀՀ դեսպանատան հյուպատոսական բաժնի ղեկավարը: Վերջինս նշել է, որ **ՀՀ դեսպանատունը պատրաստ է ապահովել Հասմիկ Գալստյանի տեղափոխումը մինչև Երևան**: Նրանց պնդմամբ կնոջ ծանր առողջական վիճակի պայմաններում նրան մինչև Սյունիքի սովորական երթուղային մեքենայով տեղափոխելը կարող է ռիսկային լինել: Նման պարագայում լավագույն տարբերակը նրան Շտապ օգնության մեքենայով տեղափոխելն է:

- Նման իրավիճակում անհրաժեշտություն էր առաջացել կազմակերպելու Հասմիկ Գալստյանին Երևանում առաջին բուժօգնության տրամադրման և նրան Երևանից Սյունիքի մարզ՝ Շտապ բուժօգնության մեքենայով տեղափոխման հարցերը: Այդ խնդրի հրատապ լուծման նպատակով **«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն գրավոր դիմել է ՀՀ Առողջապահության նախարարություն:**

Վերջիններս հեռախոսազանգի միջոցով նշել են, որ հարցի լուծման իրավասությունն իրենց չի պատկանում և գրությունը վերահասցեավորել են Երևանի քաղաքապետարանին:

- **«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն կապ է հաստատել Երևանի քաղաքապետարանի համապատասխան աշխատակցի հետ** և ներկայացրել խնդրի լուծման հրատապությունը:

Երևանի քաղաքապետարանը, չնայած ժամկետների և ռեսուրսների սղությանը, քննարկման արդյունքում որոշում է կայացրել հրատապ աջակցություն տրամադրելու Հասմիկ Գալստյանին և պաշտոնապես տեղեկացրել է ՆՍՀԿ-ին գործողությունների մասին:

Արդյունքում.

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի և շահագրգիռ այլ կառույցների ջանքերով 2019թ.-ի մարտի 1-ին Հասմիկ Գալստյանը Թբիլիսիից տեղափոխվեց Երևան, տեղում ստացավ առաջին բժշկական օգնություն և Շտապ օգնության մեքենայով տեղափոխվեց Սյունիքի մարզի տարեցների շուրջօրյա սպասարկման կենտրոն:

Հատուկ շնորհակալություն.

1. Վրաստանում ՀՀ դեսպանատան աշխատակազմին,
2. «Առաքելություն Հայաստան» Բարեգործական ՀԿ-ին,
3. Երևանի քաղաքապետարանին:

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ